ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՊԵՄԶԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի
Ն 37-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշենի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի

Հ/հ	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը	Պաշտոնի անձնագրի ծածկագիրը	Նշված թափուր պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը	Նշված թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները	Պահանջվող փաստաթղթերը
1.	**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշենի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ**	3.1-2	**Առաջատար մասնագետը՝** 1)կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով. 2)ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը. 3)հետևում է քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին. 4) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ. 5) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ քարտուղարի մոտ ընդունելության համար 6)քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին. 7)քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է քաղաքացիների դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներուն նախապատրաստում է պատասխան գրությունների նախագծեր. 8)կազմում և համայնքի հարկատուներին է ուղարկում ծանուցագրեր, նրանց հետ կազմում ժամանակացույց՝ հարկերի մուծման վերաբերյալ, կատարում է համայնքի սեփական եկամուտների հավաքագրում և մուծումներ. 9)առաջարկություն է ներկայացնում աշխատակազմի քարտուղարին՝ հարկերը և օրենքով սահմանված վճարները	**Առաջատար մասնագետը՝** 1)ունի առնվազն միջնակարգ կրթություն. 2)ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Հարկերի մասին>>, <<Հողի հարկի մասին>>, <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետութ յան օրենքների և աշխատակազմի կանոնադրության, իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ այլ իրավական ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. 3)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը. 4)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:	**Մրցույթին մասնակցել ցանկացող՝ համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝** 1)գրավոր դիմում (ձևը լրացվում է տեղում). 2)առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի (ատեստատի կամ դիպլոմի (միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունենալու դեպքում)) և աշխատանքային գրքույկի (առկայության դեպքում) պատճենները. 3)արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականների պատճեն-

			չվճարող անձանց նկատմամբ համապատասխան միջոցներ կիրառելու համար. 10) քարտուղարի հանձնարարությամբ կատարում է համայնքի բյուջեի մուտքերի հավաքագրման և հաշվառման աշխատանքներ: Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կատարում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:		ները կամ համապատասխան տեղեկանք. 4)հայտարարություններ (լրացվում են տեղում). 5)1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 6)անձնագրի (փախստականի դեպքում՝ ՀՀ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի) պատճենը: **Փաստաթղթերը ներկայացնել անձամբ:** **Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:**
Մրցույթն անցկացնելու օրը, ժամը, վայրը			**Փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը**
Օրը՝ 2018 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը՝ 11:00-ին: Վայրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշենի համայնքապետարան: Հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ գյուղ Պեմզաշեն, 1-ին փողոց, շենք 15			**Փաստաթղթերը ներկայացնելու, պաշտոնի անձնագիրը, թեստավորման փուլի հարցաշարերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաշենի համայնքապետարան (հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, գյուղ Պեմզաշեն, 1-ին փողոց շենք 15, հեռ. 0244 6-18-88) կամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժին (հասցեն՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, 1-ին հարկ, հեռ. 0312 4-90-00*146) Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:**		**2018 թվականի սեպտեմբերի 10-ը ներառյալ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԵՄԶԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԱՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ